ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐՀԱՄԱՅՆՔԻՏԱՐԱԾՔՈՒՄԱՆՎՏԱՆԳԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆԿԱ ԶՄԱԿԵՐՊՄԱՆՀԱՄԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆՆՇԱՆՆԵՐԻԵՎԳԾԱՆՇՈՒՄՆԵՐԻՍԽԵ ՄԱՅԱՎՈՐՄԱՆԵՎՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՄԱՏՈՒՑՄԱՆՊԱՅ ՄԱՆԱԳԻՐ

N«ԾՔ-ԳՀԾԶԲ-19/14»

10 հունիս 2019թ.

ք. Ծաղկաձոր«»

«Ծաղկաձորի համայնքապետարանը», իդեմսհամայնքի ղեկավար Ա.Հարությունյանի, որըգործումէհամայնքապետարանի կանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝Պատվիրատու), միկողմից,ևԱրման Սաֆարյան ԱՁ-ն,որըգործում է որպես անհատ ձեռնարկատեր (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցինսույնպայմանագիրըհետևյալիմասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է *Ծաղկաձոր համայնքի տարածքումանվտանգերթևեկությանկազմակերպմանհամար ճանապարհայինշաններիևգծանշումներիսխեմայավորմանևքարտեզագրմանծառայությունների*մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի ծառայությունը պայմանագրինհամապատասխանող ծառայությամբանհատույցփոխարինմանողջամիտժամկետ նպահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու ծառայության համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականհամարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 400000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույնպայմանագրովկնսույնպայմանագրիհիմանվրակնքված համաձայնագրերովպարտավորություններնամբողջությամբկամմասնակիորենչկատարելուհամար կողմերնազատվումենպատասխանատվությունից, եթեդաեղելէանհաղթահարելիուժիազդեցությանհետևանքով, որըծագելէսույնպայմանագիրըկնքելուցհետո, նորըկողմերըչէինկարողկանխատեսելկամկանխարգելել:Այդպիսիհիրավիճակներենեներկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականնարտակարգդրությունհայտարարելը, գործադուլները, քաղաքականհուզումները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերըևայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժիազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապակողմերից յուրաքանչյուրնհիրավունքունի լուծելպայմանագիրը՝ այդմասինանախապես տեղյակպահելով մյուսկողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրնուժիմեջէմտնումկողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

7.2 Պայմանագրիցծագածկողմիվճարայինպարտավորությունըչիկարողդադարելայլպայմանագրիցծագած՝հակընդդեմպարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորևկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիիրավունքըչիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 ՊայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայությանմատուցմանժամկետըկարողէերկարաձգվելմինչև պայմանագրով այդժամկետըլրանալը՝ Կատարողիառաջարկությանառկայությանդեպքում՝ պայմանով, որՊատվիրատուիմոտչիվերացելծառայությանօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայությանմատուցմանժամկետըկարողէերկարաձգվելմեկանգամմինչև 30 օրացուցայինօրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնությունձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումեն ՀՀ դատարաններում:

7.13 Սույնպայմանագիրըկազմվածէ5էջից, կնքվումէերկուօրինակից, որոնքունենհավասարազորիրավաբանականուժ: Սույնպայմանագրի N 1 և N 2հավելվածներըհանդիսանումենպայմանագրիանբաժանելիմասը, յուրաքանչյուրկողմինտրվումէ պայմանագրիմեկօրինակ:

7.14 ՍույնպայմանագրինկատմամբկիրառվումէՀայաստանի Հանրապետությանիրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ծաղկաձորի համայնքապետարան	ԱրմանՍաֆարյանԱՁ
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9	ք. Երևան,Քանաքեռ 6փ.5-րդնրբ.27/2
Կենտրոնական գանձապետարան	ԱյԴիԲանկՓԲԸ
ՀՎՀՀ 03001885	ՀՎՀՀ 81707554
Հ/Հ 900122002240	Հ/Հ 11807019715700
Համայնքի ղեկավար	Անհատ ձեռնարկատեր՝
---------- Ա.Հարությունյան	---------- ԱրմանՍաֆարյան

Հավելված N 1
«10» հունիս 2019թ. կնքված
«ԾՔ-ԳՀԾՁԲ-19/14»ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերովնախատեսվածչափաբաժնիհամարը	գնումներիպլանովնախատեսվածմիջանցիկծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկականբնութագիրը	չափմանմիավորը	ընդհանուրգին/ՀՀ դրամ	ընդհանուրքանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	71221300/1	Ավտոմեքենաներիհոսքերիինտենսիվության հաշվարկ կարգավորվող և չկարգավորվող բոլոր խաչմերուկներում	դրամ	400000	1	ք. Ծաղկաձոր	Պայմանգրի կնքման օրվանից 25 օրացուցայի նոր
		Հետիոտնային տեղաշարժի ուսումնասիրություն փողոցներում և խաչմերուկներում					
		Փողոցների տեխնիկական պարամետրերի երկարություն, լայնություն և այլն, հաշվարկում					
		Փողոցների մասշտաբային գծագրում հաշվարկված պարամետրերի հիման վրա:					
		Առկա իրադրության գծագրային մոդելի պատրաստում					
		Ճանապարհայինշանններիտարատեղման սխեմայավորում					
		Անհրաժեշտգծանշումներիսխեմայավորում					
		Կատարված աշխատանքների համաձայնեցում և վերջնական փոփոխությունների քննարկում պատվիրատուի հետ					
		Վերջնական փոփոխություններով փողոցների սխեմաների մշակում և համաձայնեցում միջազգային նորմերին և Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքներին համապատասխան					
		Տպագրության աշխատանքների իրականացում նսխեմանների հանձնում					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 03001885
Հ/Հ 900122002240
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ԱբանՍաֆարյանԱՁ
ք. Երևան,Քանաքեռ 6փ.5-րդնրբ.27/2
ԱյԴիԲանկՓԲԸ
ՀՎՀՀ 81707554
Հ/Հ 11807019715700
ԱՁԱրմանՍաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«10» հունիս 2019թ. կնքված
«ԾՔ-ԳՀԾՁԲ-19/14»ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ծառայության														
հրավերովն ախատեսվա ծչափաբաժն իհամարը	գնումներիպլ անովնախատ եսվածմիջանց իկծածկագիրը ըստԳՄԱդաս ակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71221300/1	Ծաղկաձորհամայնքիտարածքումանվտանգերթևեկությանկազմակերպմանհամար ճանապարհայինշանների և գծանշումների սխեմայավորմանևբարտեզագրմանծառայություններ	0	0	0	0	0	200000	400000	400000	400000	400000	400000	400000	400000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Ծաղկաձորի համայնքապետարան
ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9
Կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 03001885
Հ/Հ 900122002240
Համայնքի ղեկավար Ա.Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ԱրմանՍաֆարյանԱՁ
ք. Երևան,Քանաքեռ 6փ.5-րդնրբ.27/2
ԱյԴիԲանկՓԲԸ
ՀՎՀՀ 81707554
Հ/Հ 11807019715700
ԱՁԱրմանՍաֆարյան

(ստորագրություն)

Կ.Տ.